ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թումանյանի համայնքապետարանում 2024թ. հոկտեմբերի 30-ին ժամը 11^{00}-ին տեղի կունենա Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի և Մարց բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք և վարձակալության մրցույթ 2 լոտով:

Լոտ 1.Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, ք.Թումանյան, 6-րդ փողոց, թիվ 2/5 հասցեում գտնվող կադաստրային քարտեզի 06-004-0015-0058 ծածկագրում գտնվող 0,005739 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության անշարժ գույքի աճուրդ-վաճառք:

Մեկնարկային գին սահմանել 169000 (հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամ: Հողամասի աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%– ի չափով, մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան: Հողամասի որակական հատկանիշները՝ թեք ռելիեֆ: Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50% -ի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարը վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Լոտ 2. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Մարց գյուղի կադաստրային քարտեզի 06-071-0101-0014 ծածկագրի 0,11279 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ 25 տարի ժամկետով: Մեկնարկային գինը սահմանել տարեկան 14000 ՀՀ դրամ: Անշարժ գույքի մրցույթի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%–ի չափով, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով, մասնակցության վճարի չափը՝ 10000 դրամ:. Հողամասի որակական հատկանիշները՝ թեք ռելիեֆ:

Աճուրդին և մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Աճուրդի և մրցույթի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Թումանյանի համայնքապետարան՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան, Կենտրոնական 1: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի և մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ: Հեռախոս՝ 098-048-046:

Թումանյանի համայնքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողով